«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

_____ Մ.Գ.Մանուչարյան
13 հունվարի 2025թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Անի Արթուրի Աղաբաբյանի «Բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Լիանա Խաչատրյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Աշոտ Մարկոսյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Ստեփան Պապիկյան՝ *տեխ.գիտ.թեկնածու*, Տաթևիկ Շահինյան՝ *տնտեսագիտ. թեկնածու:*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շուկայական հարաբերությունների անցած ժամանակահատվածում իրականացված բյուջետային քաղաքականությունը դրական ձեռքբերումներով հանդերձ, ունեցել է նաև մի շարք բացթողումներ և չի կարողացել ապահովելկ իրեն վերապահված գլխավոր խնդրի՝ հասարակության պահանջմունքների բավարարման և պետության ծախսային պարտավորությունների լիարժեք և համապարփակ կատարման լուծումը: Նման իրավիճակի պատճառներն ունեն ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ բնույթ՝ պայմանավորված օրենսդրահիրավական, ինստիտուցիոնալ և մի շարք այլ գործոններով: Ներկայումս ՀՀ-ում իրականացվող բյուջետային

քաղաքականությունը դեռևս թույլ չի տալիս ապահովել պետության սոցիալ–տնտեսական կարիքների ամբողջական բավարարում և բնակչության սոցիալական բարեկեցության բարձրացում: Դա հիմնականում պայմանավորված է երկրի ֆինանսական հնարավորությունների և ծախսային պահանջմունքների անհամապատասխանությամբ: Այս առումով, հատկապես ֆինանսական սուղ միջոցների պայմաններումառաջին պլան են մղվում բյուջետային քաղաքականության կատարելագործման և բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման խնդիրները: Ակնհայտ է, որ պետության գործառույթների շրջանակի ընդլայնումը պահանջում է բյիուջետային քաղաքականության բարելավում, բյուջետային ծախսերի ծավալների շարունակական ավելացում և դրանց ուղղությունների ու կառուցվածքի վերանայում:

Տնտեսական զարգացման ներկա փուլում, ելնելով ՀՀ տնտեսության երկարաժամկետ զարգացման հրամայականից, բյուջետային քաղաքականության կատարելագործմանն ուղղված մոտեցումների մշակումն ու գործնական կիրառումը ձեռք է բերել առանցքային նշանակություն, ինչով էլ պայմանավորված են թեմայի արդիականություն ու հրատապությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում բյուջետային քաղաքականության կատարելագործմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել բյուջեի սոցիալ–տնտեսական բովանդակությունը և դերը տնտեսության պետական կարգավորման գործընթացում,
- ուսումնասիրել բյուջետային քաղաքականության էությունն ու հիմնական խնդիրները, վերլուծել բյուջետային ծախսերի տեսական հիմքերը և դրանց արդյունավետության ապահովման հիմնահարցերը,
- վերլուծել Հայաստանի Հանրապետությունում բյուջետային քաղաքականության օրենսդրահիրավական և կազմակերպական հիմքերը, բացահայտել դրա իրականացման հիմնախնդիրները և դրա արդյունավետության վրա ազդող գործոնները ՀՀ–ում,
- ուսումնասիրել բյուջետային ծախսերի հիմնավորվածության ապահովման խնդիրները,

- մշակել բյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

- բյուջետային համակարգի գործունեությունը կանոնակարգող օրենսդրական դաշտի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են առկա բացթողումները և թերությունները, ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված բյուջետային քաղաքականության կատարելագործմանը,
- բյուջետային ծախսերի տեսական հիմքերի համակողմանի վերլուծության արդյունքում մշակվել են բյուջետային ծախսերի արդյունավետության ապահովման հիմնական ուղիները և դրա գնահատման մեթոդաբանական հիմքերը,
- առաջարկվել է բյուջետային ծախսերի հիմնավորվածությունը դիտարկել որպես բյուջետային համակարգի հիմքում դրվող սկզբունք, բացահայտվել և համակարգվել են բյուջետային ծախսերի հիմնավորվածության ապահովման հիմնախնդիրները, առաջարկվել է դրանց լուծմանն ուղղված միջոցառումների համալիր՝ բյուջետային ծախսերի պլանավորման և իրականացման փուլերում հաջորդական քայլերի ներկայացմամբ,
- մշակվել է բյուջետային ծախսերի պլանավորման բազմափուլ մոտեցում՝ սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական նպատակների հիման վրա բյուջետային ծախսերի գերակայությունների սահմանումից մինչև բյուջետային ծախսերի իրականացումն ապահովող իրավական և մեթոդական ապահովվածության ուղիների ամրագրմամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***ներածությունում*** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքները և նորույթները, արդյունքների գիտագործնական

նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ ***«Բյուջետային քաղաքականության տեսական և մեթոդական հիմքերը»*** գլխում ուսումնասիրվել է բյուջեի սոցիալ-տնտեսական բովանդակությունը և դերը տնտեսության պետական կարգավորման գործընթացում, քննարկվել են բյուջետային քաղաքականության էությունն ու հիմնական խնդիրները և բյուջետային ծախսերի արդյունավետության ապահովման հիմնահարցերը:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Բյուջետային քաղաքականության իրականացման հիմնախնդիրները ՀՀ-ում»*** գլխում ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետությունում բյուջետային քաղաքականության օրենսդրահիրավական ապահովվածության հիմքերը, վերլուծության են ենթարկվել դրա վրա ազդող գործոնները, ինչպես նաև բյուջետային ծախսերի հիմնական ուղղությունները և դինամիկան:

Ատենախոսության երրորդ՝ «***Բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղղությունները ՀՀ-ում***» գլուխը նվիրված է բյուջետային ծախսերի պլանավորման կատարելագործման ուղիների, դրանց արդյունավետության և հիմնավորվածության ապահովման հիմնական մոտեցումների մշակմանը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ և առաջարկություններ, որոնք ամփոփված են ատենախոսության ***«եզրակացություններ և առաջարկություններ»*** բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսության հեղինակն իր առջև խնդիր է դրել վերլուծել Հայաստանի Հանրապետությունում բյուջետային քաղաքականության օրենսդրահիրավական և կազմակերպական հիմքերը, բացահայտել դրա իրականացման հիմնախնդիրները և դրա արդյունավետության վրա ազդող գործոնները ՀՀ-ում: Մինչդեռ աշխատանքում չկա որևէ անդրադարձ բյուջետային քաղաքականության հիմնարար իրավական ակտ հանդիսացող «Պետական բյուջեի մասին», ինչպես նաև «Պետական պարտքի մասին» օրենքներին: Փոխարենը՝ աշխատանքի 2.1 ՝ Բյուջետային քաղաքականության օրենսդրահիրավական ապահովվածության հիմքերը ենթահարցում հեղինակը

բացառապես քննարկել է «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» օրենքի առանձին հոդվածներ:

2. Ատենախոսության 20-22 էջերում հեղինակը նշել է, որ բյուջետային քաղաքականության հիմնական ցուցանիշներ են հանդիսանում բյուջետային ծախսեր/ՀՆԱ, բյուջետային դեֆիցիտ/ՀՆԱ, պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշները: Աշխատանքի գիտագործնական նշանակությունն էականորեն կբարձրանար, եթե հեղինակն իր վերլուծություններում անդրադառնար դրանց: Հեղինակը նաև նշում է, որ ՀՆԱ-ի կրճատման հետևանքով նվազում են պետական սեփականության կառավարումից ստացվող մուտքերը, սակայն աշխատանքում չկա որևէ հիմնավորում նշվածի առումով:
3. Հեղինակի կողմից գիտական նորույթ ներկայացվող կետերի շարադրանքից հնարավոր չէ պատկերացում կազմել դրանց պատշաճ հիմնավորվածության մասին, մասնավորապես. էջ 80-ում հեղինակը նշում է. «Մեր կարծիքով բյուջետային ծախսերի արդյունքների ընտրության ժամանակ հարկ է ղեկավարվել առավել կարևոր նշանակություն ունեցող հետևյալ պահանջներով...», կետերով ներկայացնելով պահանջները, որոնք չունեն հստակ հիմնավորվածություն՝ մինչդեռ հանդիսանում են գիտական նորույթի տարր: Գիտական նորույթ հանդիսացող բյուջետային ծախսերի գնահատման փուլերը, որոնք ներկայացված են էջ 86-87-ում ևս չունեն որևէ հիմնավորվածություն: Նույնը վերաբերում է նաև ատենախոսի կողմից ներկայացրած հետևյալ պնդմանը, մասնավորապես. «Ատենախոսությունում քննարկված հիմնախնդիրներից շատերը Հայաստանի Հանրապետությունում ամբողջական ու համակարգված ուսումնասիրման չեն ենթարկվել..., որով էլ պայմանավորված է ստացված արդյունքների գիտական նորույթը»: Տվյալ միտքը հստակեցման կարիք ունի, մասնավորապես, թե ո՞ր հիմնախնդիրներին է վերաբերում նշվածը, քանի որ ատենախոսության թեման բազմիցս ուսումնասիրվել է տ.գ.դ., պրոֆեսորներ Վ.Բ.Բոստանջյանի, Վ.Լ.Հարությունյանի և այլոց աշխատություններում:
4. Ատենախոսության հեղինակը ներկայացրել է բյուջետային ծախսերի պլանավորման համակարգային մոտեցում, ինչպես նաև բյուջետային ծախսերի հիմնավորվածությունն ապահովելու քայլերի հաջորդականություն: Սակայն պարզ չէ այդ մոտեցումների ձևավորման հիմքը: Գուցե հեղինակը դիտարկել է արտասահմանյան փորձը՞, սակայն դրա մասին չի հիշատակվում աշխատանքում: Նշենք նաև, որ աշխատանքում չկա որևէ անդրադարձ միջազգային փորձին՝ բացառությամբ էջ 60-61–ում ներկայացված աղյուսակ 8-ի:

5. Ատենախոսությունում տեղ են գտել լեզվաոճական բնույթի թերություններ: Առկա են նաև մի շարք տեխնիկական բնույթի թերություններ, մասնավորապես, պահպանված չէ էջերի համարակալման կարգը, և էջերի համարակալումը սկսում է տիտղոսաթերթից՝ 1-ով: Սխալներ են առկա հղումներում, մասնավորապես, էջ 10՝ աղյուսակ 1-ի, էջ 50՝ աղյուսակ 2-ի և շարունակաբար բոլոր աղյուսակներին առնչվող հղումները սխալ տեղերում են: Էջ 53-54-ի աղյուսակ 4-ի հղումն ու վերնագիրը սխալ տեղերում են, էջ 58-ի գծապատկեր 3-ը հղում չունի: Առկա են տպագրական բացթողումներ:
6. Ատենախոսության «Օգտագործված գրականության ցանկ» բաժինը խիստ աղքատիկ է: Աղբյուրների ավելի քան 80 %-ը մինչև 2015 թվականին են և մեծամասամբ ռուսական աղբյուրներ են, մինչդեռ վերջին տարիներին ոլորտին առնչվող բազմաթիվ հետազոտություններ են իրականացվել, որոնք ավելի արդիական են: Ատենախոսը չի անդրադարձել նաև հայ հեղինակներին, ինչպես նաև ատենախոսների կողմից իրականացված ուսումնասիրություններին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անի Արթուրի Աղաբաբյանի «Բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղիները ՀՀ–ում» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն հետազոտություն, որն ուղղված է ՀՀ բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղիների բացահայտմանը:

Բյուջետային քաղաքականության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ հանրապետությունում բյուջետային համակարգի զարգացմանը և բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների համալիր մշակման և դրա հետևողական իրականացման ընթացքում: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատողների համար:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 6 (վեց) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Անի Արթուրի Աղաբաբյանի «Բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղիները ՀՀ–ում» թեմայով ատենախոսությունը և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 6 (վեց) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ–ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակը խորհրդում բարեհաջող պաշտպանության դեպքում արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (13.01.2025թ., արձանագրություն թիվ 2):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
Ավագ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու **Գ.Ա.Հարությունյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու **Տ.Վ.Շահինյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Գ.Հարությունյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Տ.Շահինյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու **Ե.Ա. Հակոբյան**

«13» հունվարի, 2025թ.
Կ. Տ.